10.06.2021թ.

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՈՐՈՇՈՒՄ թիվ 023370/05
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս, ուսումնասիրելով 10.06.2021թ. թիվ 23370 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ _____ գործը և կից նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային մարմնում առկա անձնական հաշվի քարտի տվյալների Ա/Ձ Արմեն Աբովյանի (ՀՎՀՀ՝ 25393126, հասցե՝ ք. Երևան, Մառի 16 39) հարկային պարտավորությունները 26.04.2021թ-ի դրությամբ կազմել են 599.754 ՀՀ դրամ, որից 518.414 ՀՀ դրամ գումարն առաջացել է 2021թ-ի առաջին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկից: 2021թ-ի առաջին եռամսյակի շրջանառության հարկի հաշվարկից առաջացած 518.414 ՀՀ դրամ գումարը Արմեն Աբովյանի կողմից ՀՀ Հարկային օրենսգրքի 262-րդ հոդվածով սահմանված ժամկետում չի վճարվել, որի համար նախատեսվում է պատասխանատվություն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170³հոդվածով:

Կողմին հայտնաբերելու նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ: Գործում առարկություն կամ բացատրություն առկա չէ:

Այն փաստը, որ Արմեն Աբովյանի կողմից իրավախախտումը վերջին մեկ տարվա ընթացքում կատարվել է առաջին անգամ, սույն գործով դիտվում է որպես պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 33, 244², 281 հոդվածներով և 282 հոդվածի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170³ հոդվածի՝ Արմեն Աբովյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակելով տուգանք 10.000 (տաս հազար) դրամի չափով:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ծանոթություն. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի համաձայն՝
Վարչական տույժ նշանակելը վարչական իրավախախտում կատարած անձին չի ազատում այն պարտականության կատարումից, որը չկատարելու համար նշանակվել էր վարչական տույժ (հոդված 40)

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումն հանձնելու օրվանից հետո երեսուն օրվա ընթացքում: Նշված ժամկետը հարգելի պատճառներով բացթողնելու դեպքում այդ ժամկետը կարող է վերականգնվել գանգատը քննելու համար իրավազոր մարմնի (պաշտոնատար անձի) կողմից, այն անձի դիմումով, որի նկատմամբ ընդունված է որոշումը (հոդված 288) կամ որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

Խախտողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում (հոդված 305, մաս 1) գանձապետական հետևյալ հաշվեհամարին. **900005240487՝** տուգանքի վճարման անդորրագրի <<նպատակ>> դաշտում պարտադիր նշելով որոշման համարը:

Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանք ընշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում բողոքն առանց բավարարման թողնելուց հետո 15 օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ստացա որոշման պատճենը_____